



Մամլո իրազեկում

Երևան, 2016թ. մայիսի 25

Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա ցանցը (Women against Violence Europe)

սկսում է իր «Քա՛յլ արա» արշավը (*Step up! Campaign*)՝

որն ուղղված է բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաների աջակցություն
և պաշտպանություն ստանալու իրավունքներին:

Եվրոպայում աշխատող կանայք շարունակում են հարկեր վճարել և չստանալ կամ շատ քիչ հասանելիություն ունենալ մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայություններին, մինչդեռ յուրաքանչյուր 3 կանանցից 1-ը ենթարկվում է սեռական կամ ֆիզիկական բռնության: Եվրոպական 46 երկրներից միայն 15-ում են առկա մասնագիտացված Թեժ գծեր և ավելի քան 47.000 տեղի պակաս կա ապաստարաններում: Սեռական բռնությունից և բռնաբարությունից տուժածների համար չկան աջակցման կենտրոններ: Խտրականությունը կանանց ամենախոցելի խմբերի նկատմամբ խոչընդոտում է նրանց աջակցություն ստանալ: *«Եվրոպայի շատ երկրներում մասնագիտացված աջակցության ծառայությունների ոլորտում ներդրումների զգալի պակաս կա, ինչի հետևանքով էլ կանայք չեն կարողանում դիմել համապատասխան օգնության: Մենք կո՛չ ենք անում Եվրոպական Միության իշխանություններին, ազգային կառավարություններին և հասարակության այլ շահագրգռված կողմերին՝ ՔՄՅԼԵՒՐ ձեռնարկել կանանց նկատմամբ բռնությունը դադարեցնելու համար»:* (Ռոզա Լոզար, Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա ցանցի նախագահ)

Այսօր Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա ցանցը սկսում է իր «Քա՛յլ արա» (*Step Up!*) եվրոպական արշավը: Առաջիկա երկու տարիների ընթացքում Ցանցի անդամները խթանելու են Եվրոպայում բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաների աջակցություն և պաշտպանություն ստանալու իրավունքները: Մարդու իրավունքներից ամենաշատը ոտնահարվում են կանանց և աղջիկների իրավունքները, ինչը կարող է ճակատագրական լինել, օրինակ՝ 2012 թվականին կանանց սպանությունների 47%-ը իրականացվել է գուզրնկերոջ կամ ընտանիքի որևէ անդամի կողմից:

Համապատասխան աջակցության ոլորտներում ներդրումները պետք է նպաստեն տուժողի նկատմամբ լայնատարած մեղադրանքների նվազեցմանը, ինչպես նաև չբարձրաձայնված

դեպքերի բացահայտմանը: Շատ պետություններում բռնություններն արգելված են, սակայն իրականում շարունակվում են կիրառվել, և կանայք, այլընտրանք չունենալով, շարունակում են հաղործել անընդհատ կրկնվող բռնությունները: Այդ շարունակական բռնությունների հետևանքները կրում ենք բոլորս: Աջակցող ծառայությունները կենսական նշանակություն ունեն կանանց և նրանց երեխաներին ապահովություն, ուժեղանալու հնարավորություն ընձեռելու և բռնությունից ազատ ապրելու համար: **Ուստի կո՛չ ենք անում Եվրոպական հանրությանը քայլեր ձեռնարկել այնպիսի մասնագիտացված ծառայություններ ապահովելու համար, որոնք կբխեն կանանց իրավունքների պաշտպանության շահերից և կբերեն փոփոխությունների:** (Մանրամասն տեղեկությունների կամար, կարող եք դիտել կցված տեսահոլովակը <https://www.youtube.com/watch?v=lvcu2lZgpNE>)

Փաստեր, որոնք վկայում են մասնագիտացված ծառայությունների քիչ հասանելիության մասին (Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա ցանցի Հաշվետվություն, 2015թ.)

- 46 Եվրոպական երկրներից միայն 15-ում են առկա անվճար, շուրջօրյա Թեժ գծեր
- Եվրոպայի, մասնավորապես, 2004 թվականից հետո Եվրոպական Միությանն անդամագրված պետություններում, ավելի քան 47.000 տեղի պակաս կա կանանց ապաստարաններում՝ համաձայն Եվրոպայի խորհրդի չափանիշների
- Շատ երկրներում բացակայում են աջակցման կենտրոններ բռնաբարությունից և այլ սեռական բռնություններից տուժած կանանց և աղջիկների համար
- Մասնագիտացված ծառայությունների հասանելիությունը խոչընդոտված է շատ կանանց համար, այդ թվում նաև սևամորթ, էթնիկ փոքրամասնության պատկանող, հաշմանդամություն ունեցող, ներգաղթյալ, ինչպես նաև փաստաթղթեր չունեցող, տարեց և ԼԳԲՏ կանանց համար:

Կանանց իրավունքների կենտրոնի տվյալներով **2015թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը** ընկած ժամանակահատվածում **Թեժ գծով** գրանցվել է **1610** զանգ, որից **1094** եղել են ընտանեկան բռնության: Կանանց աջակցման և խորհրդատվական կենտրոնի այցերի թիվը կազմել է **620**:

2015թ. մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Կանանց իրավունքների կենտրոնի **7 մարզային ճգնաժամային կենտրոնները** ստացել են **1148** զանգ, որից ընտանեկան բռնության զանգերը եղել են **816**: Ճգնաժամային կենտրոնների այցերը եղել են **675**:

Այս հաղորդագրությամբ Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա ցանցը և Կանանց իրավունքների կենտրոնը կո՛չ են անում տեղական և եվրոպական մակարդակներում որոշում կայացնող մարմիններին

- ակտիվորեն աջակցել բռնության ենթարկված կանանց պաշտպանության և ընտանեկան բռնության կանխարգելման գործընթացին;
- նպաստել ԲՈՒՈՐ կանանց և նրանց երեխաների համար մասնագիտացված աջակցության ծառայությունների բարելավմանը;

- ընդլայնել Եվրոպայում կանանց համար մասնագիտացված ծառայությունների հասանելիությունը (մասնավորապես թեժ գծերի, ճգնաժամային կենտրոնների և ապաստարանների թիվը)
- բարելավել այն աջակցող ծառայությունների որակը, որոնք լավագույնս տրամադրվում են իրենց աշխատանքը կանանց հիմնախնդիրների վրա կենտրոնացրած՝ անկախ կանանց կազմակերպությունների կողմից:

Հայաստանում “Ընտանեկան բռնության կանխարգելման մասին” օրենքը դեռևս ընդունված չէ, իսկ ընտանեկան բռնության ոլորտում աշխատող հասարակական կազմակերպություններից մի քանիսն են մասնագիտացված աջակցություն տրամադրում ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաներին առանց որևէ ֆինանսական աջակցություն պետության կողմից: Հարկ է նշել նաև, որ բռնության ենթարկված կանայք բազմաթիվ խնդիրների լուծելու կարիք ունեն, այդ թվում սոցիալական և տնտեսական:

Քանի որ ընտանեկան բռնությունը կանանց և նրանց երեխաների նկատմամբ համընդհանուր խնդիր է, ուստի «Քա՛յլ արա» արշավը կոչ է Հայաստանում պետական մարմիններին և պաշտոնյաներին, միջազգային և տեղական կազմակերպություններին, հասարակության բոլոր անդամներին.

«Քայլե՛ք ձեռնարկել ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաներին աջակցություն ցուցաբերելու համար»

Միացե՛ք «Քա՛յլ արա» արշավին և համագործակցեք կանանց նկատմամբ բռնությունը դադարեցնելու համար:

Մանրամասն տեղեկությունների կամ «Քա՛յլ արա» արշավին (*Step Up!*) աջակցելու նպատակով խնդրում ենք դիմել Վիեննայում Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա ցանցի գրասենյակ. - office@wave-network.org, +43 1 548 27 20

Կոնտակտային անձիք Ցանցի գրասենյակում. Rosa Logar, rosa.logar@interventionsstelle-wien.at կամ Maria Rösslhuber, maria.roesslhuber@wave-network.org

Կանտակտային անձ Կանանց իրավունքների կենտրոնի գրասենյակում. Սուսաննա Վարդանյան wrcarm@arminco.com կամ Քրիստինա Պետրոսյան assistant@wrcorg.am.

Մենք կոչ ենք անում զանգվածային լրատվամիջոցներին աջակցել արշավին՝ տարածելով Եվրոպայի հասարակական կազմակերպությունների տեսաուղերձը, որը կարող էք դիտել հետևյալ հղումով. <https://www.youtube.com/watch?v=lvcu2lZgpNE>

Արշավի մասին ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել հետևյալ հղումով. www.wave-network.org

Աղբյուրներ:

European Union Fundamental Rights Agency (FRA). 2014. Violence against women – an EU-wide survey. Available at: <http://fra.europa.eu/en/publication/2014/violence-against-women-eu-wide-survey-main-results-report>

Gracia, E. and Lila, M. 2015. Attitudes towards violence against women in the EU. Available at: http://ec.europa.eu/justice/gender-equality/files/documents/151125_attitudes_enege_report_en.pdf

United Nations Office on Drugs and Crime (UNODC). 2013. Global study on homicide – trends, contexts, data. Available at: https://www.unodc.org/documents/gsh/pdfs/2014_GLOBAL_HOMICIDE_BOOK_web.pdf

Women against Violence Europe (WAVE). 2016. WAVE Report 2015 – On the role of specialist women’s support services in Europe. Available at: http://files.wave-network.org/researchreports/WAVE_Report_2015.pdf

